ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-3029 «20» 11 2014թ.

Ձեր 20.10.2014թ. թիվ 2621/1476 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2014թ. հոկտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Երևան քաղաքի վարչությունում:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ներկայացվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Թերություններ

ՁՊՎ-ի 1-ին և 2-րդ հարկերի սանհանգույցների զուգարանակոնքերի ջրահեռացման համակարգերը արդեն իսկ փոխարինվել են նորերով:

Համաձայն ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 26-րդ կետի 5-րդ ենթակետի ձերբակալվածներին անհատական օգտագործման նպատակով հիգիենիկ թուղթ տրամադրվում է ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում, որը պատշաճ կերպով իրականացվում է:

Խախտումներ

ՁՊՎ-ի վարչակազմը ղեկավարվելով <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 174-րդ և 02.04.2009թ. թիվ 351-Ն որոշմամբ հաստատված <<Ձերբակալված և կալանավորված անձանց ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ուղեկցման և պահպանման կարգ>>-ի 46-րդ կետերի պահանջներով, քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից տրված հայտերի հիման վրա ձերբակալվածներին հանձնում է հայտում նշված ուղեկցողներին՝ պահանջվող վայր տեղափոխելու համար, ինչը կատարվել է նաև Գ.Հակոբյանի, Ա.Գոմցյանի, Ա.Սարդարյանի և Գ.Համբարձումյանի պարագայում:

Ինչ վերաբերվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից ՀՀ կառավարության 02.04.2009թ. թիվ 351-Ն որոշման 40-րդ և 41-րդ կետերի պահանջները ամբողջությամբ չպահպանելուն, ապա առաջարկվում է այդ կապակցությամբ դիմել ՀՀ քննչական կոմիտե:

Ա.Սարդարյանը 11.09.2014թ. ժամը 10.45-ին ՁՊՎ-ից դուրս է բերվել քննչական գործողություններ կատարելու նպատակով և նույն օրը ժամը 17.55-ին վերադարձվել է ՁՊՎ: Այնուհետև ժամը 20.10-ին վարույթն իրականացնող մարմնի կողմից ՁՊՎ է ներկայացվել դատարանի կողմից գրավի կիրառման միջնորդությունը բավարարելու վերաբերյալ որոշման, գրավի մուծման անդորագրի պատճենները և գրություն՝ Ս.Սարդարյանին ազատ արձակելու վերաբերյալ: ՁՊՎ վարչակազմը Ս.Սարդարյանի իրավունքները չխախտելու համար ազատ է արձակել նրան՝ հիմք ընդունելով դատարանի կողմից կայացված որոշումն ու վարույթն իրականացնող մարմնի գրությունը, միաժամանակ վարույթն իրականացնող մարմնից պահանջել է համապատասխան որոշում:

Արգիշտի Գոմցյանը 26.09.2014թ. ժամը 02.35-ին բերման է ենթարկվել ոստիկանության Մաշտոցի բաժին և նույն օրը տեղափոխվել է Մաշտոցի քննչական բաժին, որտեղ ժամը 04.20-ին ձերբակալվել է: Մի շարք անհետաձգելի քննչական գործողություններ կատարելուց հետո նշված օրը ժամը 20.25-ին Ա.Գոմցյանը ներկայացվել է ոստիկանության Մաշտոցի բաժնի հերթապահ մաս՝ ՁՊՎ տեղափոխելու համար: Ա.Գոմցյանը ՁՊՎ է ընդունվել 26.09.2014թ. ժամը 21.00-ին:

Գեղամ Համբարձումյանը 09.09.2014թ. ժամը 12.00-ին բերման է ենթարկվել ոստիկանության Արաբկիրի բաժին, որտեղ նախապատրաստվել են նյութեր և ժամը 14.40-ին վերջինս ազատ է արձակվել: Նույն օրը ժամը 21.00-ին Գ.Համբարձումյանը հրավիրվել է Արաբկիրի քննչական բաժին, որտեղ ձերբակալվել է և 10.09.2014թ. ժամը 01.45-ին տեղափոխվել ՁՊՎ: 12.09.2014թ. Գ.Համբարձումյանի նկատմամբ խափանման միջոցը կալանավորում ընտրելու միջնորդությունը դատարանի կողմից մերժվել է, որից հետո քննիչի կողմից խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին և նույն օրը Գ.Համբարձումյանը նշված որոշման հիման վրա ազատվել է արգելանքից: ՁՊՎ–ի հերթապահի կողմից <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում թյուրիմացաբար նշվել է, որ Գ.Համբարձումյանը ազատ է արձակվել դատարանի կողմից գրավի միջնորդությունը բավարարելու հիման վրա, ինչի համար հերթապահը նախազգուշացվել է:

Նառա Առուստամյանը 01.09.2014թ. ժամը 23.55-ին բերման է ենթարկվել ոստիկանության Մալաթիայի բաժին, որտեղ նախապատրաստվել են նյութեր և 02.09.2014թ. ժամը 02.45-ին ազատ է արձակվել: Ոստիկանության Մալաթիայի բաժնում գտնվելու ընթացքում Ն.Առուստամյանը մարմնական վնասվածքներ չի ունեցել: Նույն օրը ժամը 19.00-ին Ն.Առուստամյանը հրավիրվել է Մալաթիայի քննչական բաժին, որտեղ ձերբակալվել և 03.09.2014թ. ժամը 07.30-ին ընդունվել է ՁՊՎ: Ընդունման պահին Ն.Առուստամյանի մարմնի արտաքին զննության ժամանակ հայտնաբերվել և արձանագրվել են մարմնական վնասվածքներ, որոնց վերաբերյալ ՁՊՎ վարչակազմը իրազեկել է վարույթն իրականացնող մարմնին: Ն.Առուստամյանը 03.09.2014թ. և 05.09.2014թ. ՁՊՎ-ի տարածքից դուրս է բերվել քննչական գործողություններ կատարելու նպատակով և վերադարձել է նոր մարմնական վնասվածքներով, որոնք նույնպես արձանագրվել են ՁՊՎ վարչակազմի կողմից ու իրազեկվել վարույթն իրականացնող մարմնին: Նշված մարմնական վնասվածքների վերաբերյալ հաղորդումը գրանցվել է ոստիկանության Մալաթիայի բաժնի <<Հանցագործությունների մասին դիմումների, հաղորդումների, գրանցման-հաշվառման>> թիվ 1 գրքում, որի կապակցությամբ վարույթն իրականացնող մարմնի կողմից կատարվում է քննություն: Ն.Առուստամյանի մարմնական վնասվածքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար առաջարկվում է դիմել ՀՀ քննչական կոմիտե, քանի որ ոստիկանությունը պահանջվող տեղեկատվությանը չի տիրապետում:

ՀՀ ոստիկանության շտաբ